

Բանալի բառեր՝ ինտեգրում, արժույթային քաղաքականություն, հաշվարկային միավոր, փոխարժեք, գործառնական ծախսեր:

ՀՏԴ 339

## ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

### Միսակ ԱՎԱԳՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի  
տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Այսօր աշխարհի տարբեր մայրցամաքներում ձևավորված տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներում տեղի ունեցող գործընթացները հասել են զարգացման այնպիսի մակարդակի, որ դրանց էլ ավելի խթանելու և այդ գործընթացներից առավելագույն եկամուտ ստանալու համար անհրաժեշտություն է առաջացել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների միջև ապրանքների, աշխատուժի և կապիտալի շարժի սահմանափակումների վերացումից բացի, նվազեցնել նաև փոխադարձ առևտրի ժամանակ ի հայտ եկող գործառնական ծախսերը և զսպել արժույթային ռիսկերը: Այդ նպատակով բազմաթիվ ինտեգրացիոն միավորումներ ձեռնարկում են արժույթային միություն ձևավորելու քայլեր՝ դրա շրջանակներում ազգային արժույթների փոխարեն ներդնելով միասնական արժույթ, որը փոխադարձ առևտրում կհանգեցնի ապրանքների ու ծառայությունների էժանացմանը՝ նպաստելով դրանց միջազգային մրցունակության բարձրացմանն ու օտարերկրյա ներդրումների աճին: Այդ և պատճառով, որ շատ ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում ինտեգրման փուլերի ձևավորման հաջորդականությունը ներկայումս ընթանում է բավականին արագ՝ ի տարբերություն նախկինում ստեղծված ինտեգրացիոն միավորումների (օրինակ՝ Եվրոպական Միության), որտեղ յուրաքանչյուր հաջորդ փուլի անցման համար պահանջվում էր տևական ժամանակ: Ինչ խոսք, երկրների տնտեսական ինտեգրման ինտենսիվության մակարդակի բարձրացումը և դրանով պայմանավորված՝ ինտեգրման հերթական փուլերին արագորեն անցում կատարելու ձգտումը պայմանավորված է նաև գլոբալացման գործընթացների խորացմամբ և համաշխարհային տնտեսության բևեռացմամբ:

Ընդհանուր առմամբ, արժույթային միությանը երկրների մասնակցությունը վերջիններիս ընձառում է մի շարք առավելություններ: Դրանք են.

- գործառնական ծախսերի կրճատում,
- արժույթային ռիսկերի նվազեցում,

գների կայունության ապահովում հատկապես՝ գնաճի բարձր մակարդակ ունեցող երկրների համար (փորձը ցույց է տալիս, որ նման երկրները, անդամակցելով այս կամ այն արժույթային միավորմանը, հնարավորություն են ստանում նվազեցնել գնաճի բարձր մակարդակը՝ այն հասցնելով առնվազն տվյալ արժույթային միության մյուս անդամ երկրներում գոյություն ունեցող գնաճի միջին մակարդակին),

- առավել վստահելի դրամավարկային քաղաքականության որդեգրումը՝ շնորհիվ տոկոսադրույթների կոշտ սահմանման,

- արժույթային կարգավորումների նկատմամբ սպեկուլյատիվ հարձակումների բացառումը:

Արժույթային միության անցում կատարելու և միասնական արժույթ ներմուծելու դեպքում կրճատվում են նաև անդրսահմանային բիզնեսի իրականացման ծախսերը, ինչն էլ, իր հերթին, նպաստում է ներտարածաշրջանային առևտրի զարգացմանը, ապրանքների ու ծառայությունների էժանացմանը: Այդ եկամուտները առաջանում են շնորհիվ միության անդամ երկրներում գների ճկունության, այդ երկրների միջև արտադրության գործոնների շարժունակության, տնտեսական շուկերի համազգափուլության և տարածաշրջանային առևտրի տեսակարար կշռի բարձր մակարդակի<sup>1</sup>:

Կարևորելով արժույթային միության ձևավորման արդյունքում ստացվելիք տնտեսական օգուտները՝ անհրաժեշտ է նշել, որ երկրները, այնուամենայնիվ, պետք է խիստ զգուշորեն մոտենան ցանկացած նման գործընթացին: Այս հարցի լրջության մասին է խոսում այն հանգամանքը, որ արժույթային միությունը հանդիսանում է երկրների միջև տնտեսական ինտեգրման վերջին և բարձրագույն փուլը, որը ենթադրում է ազգային արժույթներից հրաժարում, միասնական արժույթային միավորի ներմուծում և, որ ամենակարևորն է, դրամավարկային և արժույթային անկախ քաղաքականության իրականացման հնարավորության կորուստ: Չպետք է մոռանալ, որ անգամ Եվրոպական Միությունում ինտեգրման այս փուլին հասնելու համար պահանջվել է երկար ժամանակ (մոտ 20 տարի) և տնտեսական ու քաղաքական մեծ ջանքեր:

Արժույթային միությանը երկրների անդամակցությունն առաջ է բերում նաև մի շարք խնդիրներ, որոնցից առավելապես կարևորվում են հետևյալները.

- երկրի դրամավարկային և արժույթային քաղաքականության նկատմամբ ազգային կենտրոնական բանկերի վերահսկողության թուլացումը, վերջիններիս կողմից արժույթային փոխարժեքի կարգավորման գործառնությունների վերացումն ու

<sup>1</sup> Кузнецов В.В., Процесс валютной интеграции в АСЕАН, Российский внешнеэкономический вестник, №6 (Июнь), 2006, с. 25, [Էլեկտրոնային ռեսուրս]՝ <https://cyberleninka.ru/article/n/protsess-valyutnoy-integratsii-v-asean>

դրամավարկային եւ արժութային քաղաքականության ոլորտներում կարևորագույն որոշումների կայացման իրավասությունների փոխանցումը արժութային կարգավորման վերազգային մարմիններին,

- միության անդամ երկրներից մեկում ծագող տնտեսական ճգնաժամերի արագ տարածումը մյուս անդամ երկրներում՝ վերջիններին համար ստեղծելով տնտեսությունների ապակայունացման լուրջ վտանգ:

Ուսումնասիրելով տարբեր ինտեգրացիոն խմբավորումների կողմից արժութային միություն ձևավորելու ընթացքը և հետևելով դրա շուրջ անդամ պետությունների միջև ընթացող բանակցություններին՝ կարելի է փաստել, որ գրեթե բոլոր միավորումներում կիրառվում է Եվրոպական արժութային միության ձևավորման և կայացման փորձը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է մինչև միասնական արժույթի ներմուծումը միասնական հաշվարկային միավորի կիրառմանը (Եվրոպական արժութային համակարգում այդպիսի միավոր հանդիսանում էր էջուն (ECU))՝ որպես պահուստային ակտիվ, ինչպես նաև անկանխիկ շրջանառության և անդամ երկրների կենտրոնական բանկերի միջև իրականացվող գործարքների վճարային միջոց: Շատ դեպքերում միասնական հաշվարկային միավորն իրենից ներկայացնում է արժութային զամբյուղ՝ կազմված արժութային միության անդամ հանդիսացող պետությունների ազգային արժույթներից, որոնցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը հիմնականում կախված է այդ պետությունների ընդհանուր ՀՆԱ-ի և արտաքին ապրանքաշրջանառության մեջ յուրաքանչյուր երկրի մասնաբաժնից:

Այսօր աշխարհում գործում է թվով 5 արժութային միություն, որտեղ կիրառվում է ընդհանուր դրամավարկային ու արժութային քաղաքականություն և օգտագործվում է միասնական արժույթ: Դրանցից երեքը Ֆրանսիայի նախկին գաղութների միջև ձևավորված միություններ են, որի շրջանակներում ձևավորված միասնական արժույթի հիմքում ընկած է եղել ֆրանսիական ֆրանկը: Դրանք են.

- *ԵՄ տնտեսական և արժութային միություն՝ EMU (Economic and Monetary Union)* (միասնական արժույթ՝ եվրո, որը գործում է 1999 թվականից), որի կազմի մեջ մտնում են 19 պետություն (Ավստրիա, Բելգիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Իսպանիա, Հունաստան, Սլովենիա, Կիպրոս, Մալթա, Սլովակիա, Եստոնիա, Լատվիա, Լիտվա):

- *Արևմտաաֆրիկյան տնտեսական և արժութային միություն՝ UEMOA (ֆր.՝ Union économique et monétaire ouest-africaine)* (միասնական արժույթ՝ Արևմտյան Աֆրիկայի CFA ֆրանկ՝ franc CFA XOF, որը գործում է 1945 թվականից), որի կազմի մեջ մտնում են Արևմտյան Աֆրիկայի 8 պետություն (Բենին, Բուրկինա Ֆասո, Կոտ դ'Իվուար, Գվինեա Բիսաու, Մալի, Նիգեր, Սենեգալ, Տոգո): Արևմտյան Աֆրիկայի CFA ֆրանկը ի սկզբանե ամրակցված էր ֆրանսիական ֆրանկի, իսկ հետագայում՝ եվրոյի հետ: Ներկայումս այն եվրոյի նկատմամբ ունի ֆիքսված փոխարժեք (1 եվրո՝ 655.957 CFA ֆրանկ):

- *Կենտրոնական Աֆրիկայի տնտեսական և արժութային ընկերակցություն՝ CEMAC (Economic and Monetary Community of Central Africa)* (միասնական արժույթ՝ Կենտրոնական Աֆրիկայի CFA ֆրանկ՝ franc CFA XAF, որի կազմի մեջ մտնում են Կենտրոնական Աֆրիկայի 6 պետություն (Կամերուն, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն, Կոնգոյի Հանրապետություն, Գաբոն, Հասարակածային Գվինեա, Չադ): Կենտրոնական Աֆրիկայի CFA ֆրանկը նույնպես սկզբնապես ամրակցված էր ֆրանսիական ֆրանկի, իսկ հետագայում՝ եվրոյի հետ, որի ֆիքսված փոխարժեքը կազմում է 655.957 CFA ֆրանկ 1 եվրոյի դիմաց:

- *Արևելյան Կարիբյան արժութային միություն՝ ECCU (Eastern Caribbean Currency Union)* (միասնական արժույթ՝ Արևելյան Կարիբյան դոլլար, որն ընդգրկում է 8 պետություն (Անգուիլա, Անտիգուա և Բարբուդա, Դոմինիկա, Գրենադա, Մոնտսերատ, Սենթ Բիթս և Նևիս, Սենթ Լուսիա, Սենթ Վինսենթ և Գրենադիններ): Արևելյան Կարիբյան դոլլարը ամրակցված է ԱՄՆ դոլլարի նկատմամբ (1 ԱՄՆ դոլլարը՝ 2.7169 Արևելյան Կարիբյան դոլլար):

- *Ֆրանսիայի անդրծովյան տարածքների միություն* (միասնական արժույթ՝ CFP ֆրանկ, որը գործում է 1945 թվականից), որի անդամ են հանդիսանում Ֆրանսիայի անդրծովյան 3 տարածք (Ֆրանսիական Պոլինեզիա, Նոր Կալեդոնիա, Ուոլիս և Ֆոտունա): CFP ֆրանկը ի սկզբանե ամրակցված էր ֆրանսիական ֆրանկի, իսկ հետագայում՝ եվրոյի նկատմամբ (1000 CFP ֆրանկը՝ 8.38 եվրո):

Կերոնշյալ արժութային միությունների գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, մինչև այժմ ձևավորված այդ միություններից ամենահաջողվածը Եվրոպական արժութային միությունն է, որի շրջանակներում փաստացի գործում է միասնական արժույթ՝ եվրոն, որը միջազգային մասշտաբով հանդիսանում է ամենափոխարկելի միջազգային արժույթներից մեկը և որի նկատմամբ պաշտոնապես ֆիքսվում են տարբեր պետությունների ազգային արժույթներ: Եվրոյի գոտու շարունակվող ընդլայնումը վկայում է այն, որ Եվրոպական արժութային միության վերջնական ձևավորումը դեռևս ավարտված չէ: Նշենք, որ միայն 2007-2015թթ. ընթացքում եվրոյի գոտուն են միացել 7 պետություն՝ Սլովենիան (01.01.2007թ.), Կիպրոսը (01.01.2008թ.), Մալթան (01.01.2008թ.), Սլովակիան (01.01.2009թ.), Եստոնիան (01.01.2011թ.), Լատվիան (01.01.2014թ.) և Լիտվան (01.01.2015թ.):

Գոյություն ունեն նաև երկրներ, որոնք չեն մտնում այս կամ այն արժութային միության մեջ, սակայն այլ պետությունների ազգային արժույթները պաշտոնապես օգտագործում են որպես վճարահաշվարկային և պահուստային միջոց: Շուրջ որում, նման երկրները կարող են նաև չունենալ ազգային արժույթ, իսկ ունենալու դեպքում արտասահմանյան արժույթները պարզապես օգտագործում են ազգային արժույթին զուգահեռ կամ էլ վերջինս կապակցում են արտասահմանյան արժույթի նկատմամբ: Այդպիսի երկրները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն երկրները, որոնք այլ պետությունների ազգային արժույթն օգտագործում են ֆորմալ ձևով՝ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա, իսկ երկրորդ խմբի մեջ՝ այն երկրները, որոնք այլ պետությունների ազգային արժույթն օգտագործում են ոչ ֆորմալ ձևով՝ առանց Եմիտենտ պետության հետ համաձայնագրի կնքման: Առաջին խմբի մեջ մտնող երկրների շրջանակներում այսօր գործում են հետևյալ արժութային «գոտիները».

- *ԱՄՆ դոլլարի «գոտի»*, որի կազմի մեջ մտնում են ԱՄՆ-ը, նրա կղզի տարածքները (Ամերիկյան Վիրջինյան կղզիներ, Ամերիկյան Սամոա, ԱՄՆ-ի Արտաքին փոքր կղզիներ, Գուամ, Պուերտո Ռիկո, Հյուսիսային Մարիանյան կղզիներ), Բերմուդյան կղզիները, Կարիբյան Նիդերլանդները (Բոնեյրե, Սինտ Էվստատիուս և Սաբա), Բրիտանական վիրջինյան կղզիները, Հնդկական օվկիանոսի բրիտանական տարածքները, Արևելյան Թիմորը, Մարշալյան կղզիները, Պալաուն, Պանաման, Սալվադորը, Թուրքես և Կայկոս կղզիները, Միկրոնեզիայի Դաշնային Նահանգները, Էկվադորը և Չիլեբաբլեն,

- *Ֆունտ ստերլինգի «գոտի»*, որի կազմի մեջ մտնում են Միացյալ Թագավորությունը, նրա անդրծովյան տարածքները (Բրիտանական անտարկտիկական տարածք, Բրիտանական Հնդկական օվկիանոսի տարածք, Ֆոլկլանդյան կղզիներ, Զիբրալթար, Սուրբ Հեղինեի, Համբարձման և Տրիստան դա Կունյա կղզիներ, Հարավային Ջորջիա և Հարավային Սենդվիչ կղզիներ) և բրիտանական թագի կախյալ տարածքները (Գերնսի, Մեն կղզի և Ջերսի),

• Միջապարի դոլլարի և Բրունեյի դոլլարի «գոտի», որի կազմի մեջ մտնում են Միջապարը և Բրունեյը և որոնց արժույթները կապակցված են միմյանց նկատմամբ 1:1 հարաբերակցությամբ,

• Հարավաֆրիկյան ռանդի «գոտի», որի կազմի մեջ մտնում են Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Լեսոտոն, Նամիբիան և Սվազիլենդը:

Այլ պետությունների կողմից ոչ ֆորմալ օգտագործվող արժույթներից են.

• Ավստրալական դոլլարը, որը շրջանառվում է Ավստրալիայի արտաքին տարածքներում (Աշմոր և Կարոյե կղզիներ, Ավստրալական անտարկտիկական տարածք, Տնկոյան կղզի, Կոկոս, Կորալյան ծովի կղզիներ, Գերդ Կղզի և Մակդոնալդ կղզիներ, Նորֆոլկ կղզի), ինչպես նաև Կիրիբատիում, Նաուրուում և Թուվալուում (Եմիտենտ երկիրը՝ Ավստրալիա),

• Նոր Զելանդական դոլլարը, որը շրջանառվում է Նոր Զելանդիայի տարածքներում (Կուկի կղզիներ և Նիուե), ինչպես նաև Փիթերն կղզիներում (Եմիտենտ երկիրը՝ Նոր Զելանդիա),

• Հոնգ Կոնգի դոլլարը, որը շրջանառվում է Մակաուում (Եմիտենտ երկիրը՝ Հոնգ Կոնգ),

• Հնդկական ռուպիան, որը շրջանառվում է Բուրնում և Նեպալում (Եմիտենտ երկիրը՝ Հնդկաստան),

• Հայկական դրամը, որը շրջանառվում է Արցախում (Եմիտենտ երկիրը՝ Հայաստան),

• Իսրայելի նոր շեյթելը, որը շրջանառվում է Պաղեստինում (Եմիտենտ երկիրը՝ Իսրայել),

• Հորդանանյան դինարը, որը շրջանառվում է Պաղեստինի Արևմտյան ափում (Եմիտենտ երկիրը՝ Հորդանան),

• Ռուսական ռուբլին, որը շրջանառվում է Աբխազիայում և Հարավային Օսեթիայում (Եմիտենտ երկիրը՝ Ռուսաստան),

• Շվեյցարական ֆրանկը, որը շրջանառվում է Լիխտենշտեյնում (Եմիտենտ երկիրը՝ Շվեյցարիա),

• Թուրքական փրակը, որը շրջանառվում է Հյուսիսային Կիպրոսում (Եմիտենտ երկիրը՝ Թուրքիա),

• Դանիական կրոնան, որը շրջանառվում է Գրենլանդիայում և Ֆարերյան կղզիներում (Եմիտենտ երկիրը՝ Դանիա):

Ինչպես երևում է, աշխարհի շատ պետություններ որպես պաշտոնական վճարային միջոց՝ օգտագործում են այլ երկրի արտասահմանյան արժույթ կամ իրենց ազգային արժույթը ֆիքսում են առավել կայուն արժույթներից մեկի նկատմամբ: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ որքան էլ արտարժույթային տատանումներից խուսափելու նպատակով երկրները ձգտեն իրենց ազգային արժույթը կապակցել նման արժույթների հետ, միևնույն է, այն երկրներում կամ տարածաշրջանային միավորումներում, որտեղ միասնական արժույթը ամրակցված է, օրինակ, եվրոյի կամ ԱՄՆ դոլլարի նկատմամբ, դրամավարկային քաղաքականությունը չի կարող իրականացվել անկախ, քանի որ այն մշտապես կախված է լինում ԵՄ կամ ԱՄՆ կողմից վարվող տնտեսական քաղաքականությունից:

Ենթե, որ ներկայում աշխարհի տարբեր մայրցամաքներում մի շարք պետությունների միջև ընթանում են նոր տարածաշրջանային արժույթային միություններ ձևավորելու վերաբերյալ բանակցություններ: Դրանցից են.

• Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի (GCC - Gulf Cooperation Council) արժույթային միություն: Նշված խորհրդի (հիմնադրվել է 1981 թվականին) անդամ 6 երկրների՝ Բահրեյնի, Կատարի, Զուբեյդի, Սաուդյան Արաբիայի, Օմանի և Արաբական միացյալ Եմիրությունների կողմից 2009 թվականին որոշում է կայացվել ստեղծել տնտեսական միություն՝ տարածաշրջանում ներդնելով միասնական արժույթ (նախատեսվում է, որ այն կանվանվի «խալիջի»), սակայն դեռևս արժույթային միության ձևավորման և միասնական արժույթի ներդրման վերջնական ժամկետները որոշված չեն: Բացի այդ, քաղաքական տարածաշրջանային պատճառով Օմանը և Արաբական միացյալ Եմիրությունները սառեցրել են իրենց անդամակցությունը միությանը:

• Արևելյան Աֆրիկայի համայնքի (EAC - East African Community) արժույթային միություն: Արևելյան Աֆրիկայի համայնքը հիմնադրվել է 1967թ., իր գործունեությունը դադարեցրել է 1977թ. և կրկին վերսկսել է գործել 2000 թվականից: Համայնքի կազմի մեջ մտնում են Արևելյան Աֆրիկայի 6 երկրներ՝ Բուրունդի, Զենիա, Ռուանդա, Հարավային Սուդան, Թանզանիա և Ուգանդա: 2010թ. սկսել է գործել Արևելյան Աֆրիկայի համայնքի ընդհանուր շուկան, որի շրջանակներում ապրանքները, աշխատուժը և կապիտալը շրջանառվում են առանց սահմանափակումների: 2013թ. կազմակերպության անդամ երկրների ղեկավարների կողմից ստորագրվել է մինչև 2023թ. արժույթային միություն ձևավորելու մասին արձանագրություն, ինչը նախատեսում է նաև միասնական արժույթի ներմուծում, որը կունենա «Արևելաաֆրիկյան շիլլինգ» անվանումը:

• Հարավային Աֆրիկայի զարգացման համայնք՝ SADC (Southern African Development Community), որը հիմնադրվել է 1992թ. և հանդիսանում է առևտրատնտեսական միություն: Նախատեսվում է մոտ ապագայում խմբավորման շրջանակներում ստեղծել արժույթային միություն, որի կազմի մեջ կմտնեն համայնքի բոլոր անդամ 15 պետությունները՝ Լեսոտոն, Նամիբիան և Սվազիլենդը, որոնց արժույթները ֆիքսված են հարավաֆրիկյան ռանդի նկատմամբ, ինչպես նաև Անգոլան, Բոտսվանան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Մադագասկարը, Մալավին, Մավրիտիան, Մոզամբիկը, Սեյշելյան կղզիները, Տանզանիան, Զանբիան և Զիմբաբվեն և Հարավաֆրիկյան Հանրապետությունը:

• Արևմտյան Աֆրիկայի արժույթային գոտի՝ WAMZ (West African Monetary Zone), որը ձևավորվել է 2000 թվականին և որի կազմի մեջ մտնում են Արևմտյան Աֆրիկայի թվով 6 պետություն՝ Գանբիան, Գանան, Գվինեան, Սիերա Լեոնեն և Լիբերիան: Այս գոտու ստեղծման նպատակն է մինչև 2020 թվականը ստեղծել միասնական արժույթային միավոր՝ Էկո (Eco), որը կմրցակցի CFA ֆրանկին: Նախատեսվում է, որ ներդրվելիք միասնական արժույթը կամրակցվի եվրոյի նկատմամբ և կերաշխավորվի Ֆրանսիայի Գանձապետարանի կողմից:

• Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական համայնք՝ ECOWAS (Economic Community of West African States), որը հիմնադրվել է 1975թ. և որի կազմի մեջ մտնում են Արևմտաաֆրիկյան տնտեսական ու արժույթային միությունը (UEMOA), Արևմտյան Աֆրիկայի արժույթային գոտին (WAMZ), ինչպես նաև Կաբո Վերդեի Հանրապետությունը: Համայնքը ներկայումս նախատեսում է նշված տարածաշրջանային խմբավորումներին միավորել մեկ միասնական արժույթային միության մեջ<sup>2</sup>:

• «Բոլիվարյան այլընտրանք Ամերիկաների համար (ALBA)» կազմակերպության արժույթային միություն: «Բոլիվարյան այլընտրանք Ամերիկաների համար» ինտեգրացիոն խմբավորումը ձևավորվել է 2004թ. Վենեսուելայի և Կուբայի կողմից՝ Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների տնտեսական ինտեգրման նպատակով: Ներկայում, բացի հիմնադիր պետություններից, միության կազմի մեջ մտնում են ևս 10 պետություն՝ Անտիգուա և Բարբուդա, Բոլիվիա,

<sup>2</sup> IFC Bulletin No 32, Economic and financial convergence en route to regional economic integration: experience, prospects and statistical issues amidst global financial turmoil, Bank for International Settlements, January 2010, p. 142.

Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Գրենադա, Նիկարագուա, Սենթ Զիթս ու Նևիս, Սենթ Լուսիա, Սենթ Վինսենթ և Գրենադիններ, Ուրուգվայ: Միության անդամ երկրների կողմից 2009 թվականին որոշվել է ձևավորել արժույթային միություն՝ միասնական արժույթով: Այդ նպատակով 2010թ. հունվարի 1-ից փոխադարձ հաշվարկների համար շրջանառության մեջ է դրվել միասնական վիրտուալ հաշվարկային միավորը՝ սուկրեն (SUCRE - իսպ.՝ Sistema Unitario de Compensación Regional - Տարածաշրջանային փոխհատուցման միասնական համակարգ)՝ միության անդամ երկրներում ԱՄՆ դոլլարի շրջանառության ծավալները նվազեցնելու նպատակով: Նախատեսվում է սուկրեն կիրառել նաև որպես կանխիկ շրջանառության միջոց մոտ ապագայում, որի ժամկետը դեռևս նախանշված չէ:

• *Ասիական արժույթային միություն.* 2006թ. ASEAN+3 խմբավորման մեջ մտնող 13 երկրների կողմից ներդրվեց Ասիական դրամական միավորը՝ AMU-ն (Asian monetary unit), որը, Եվրոպական արժույթային միավորի՝ էյուրոյ (ECU) նման, հանդիսանում է արժույթային զամբյուղ՝ բաղկացած 13 երկրների արժույթներից: Նպատակ ունենալով Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում զարգացնելու տնտեսական համագործակցության ուղիները՝ Ասիական զարգացման բանկը հետագայում ներդրեց քվիրինգային հաշվարկային միավոր՝ ACU-ն (Assian currency unit): Ներկայում ASEAN-ի անդամ պետությունների, ինչպես նաև Ճապոնիայի, Չինաստանի և Հարավային Կորեայի միջև բանակցություններ են ընթանում մինչև 2020թ. ձևավորել լիարժեք գործող արժույթային միություն, որտեղ կներդրվի միասնական տարածաշրջանային արժույթ՝ «Ասիո» (Asio) անվանմամբ:

Ավստրալիայի և, որ վերոնշյալ արժույթային միությունների մեծ մասի ձևավորման համար խթան է հանդիսացել Եվրոպական արժույթային համակարգը, որն իր արդյունավետությամբ ցույց է տվել այն տնտեսական օգուտները, որոնք անդամ երկրները օգտագործել են իրենց տնտեսությունների զարգացման համար: ԵՄ փորձը ցույց է տալիս, սակայն, որ տնտեսական ինտեգրման յուրաքանչյուր հաջորդ փուլի ձևավորումն ու գործունեությունը պահանջում է հաջողությամբ, եթե նախորդ փուլի փուլերի ձևավորման աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են, և դրանք գործում են առանց սահմանափակումների, ինչն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ «տնտեսական և արժույթային միության ստեղծման համար անհրաժեշտ է ձևավորել արդյունավետ գործող ընդհանուր շուկա, ինչը պահանջում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ շարժի ճանապարհին առկա մնացած արգելքների վերացում»<sup>3</sup>:

Այսպիսով, կարծում ենք, որ միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլում լիարժեք արժույթային միության ձևավորման համար անդամ պետությունների կողմից անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

• նախապես գնահատել արժույթային միության հետագա գործունեության արդյունավետությունը, որից հետո անկախ մակրոտնտեսական և դրամավարկային քաղաքականության վարմանը զուգահեռ՝ քայլեր ձեռնարկել կորորինացնելու երկրների արժույթային քաղաքականությունը: Վերջինս, իր հերթին, թույլ կտա բացահայտել, թե որ անդամ երկրներն են պատրաստ ապագայում մտնել լիարժեք արժույթային միություն, իսկ որ երկրները՝ ոչ,

• անդամ երկրներում ապահովել տնտեսական կայունություն, հակառակ դեպքում, մեկ պետության առջև ծառայած խնդիրների լուծումը կընկնի մյուս անդամ պետության կամ պետությունների վրա (այնպես, ինչպես Հունաստանի խնդիրն է ԵՄ-ի համար),

• հաստատել միջոցառումների հստակ պլան՝ դրանց կատարման կոնկրետ ժամանակացույցով, ինչպես նաև ստեղծել վերպետական մարմին, որը կզբաղվի պլանի կատարման նկատմամբ հսկողությամբ իրականացմամբ և կհանդիսանա միասնական էմիսիոն կենտրոն,

• սահմանել արժույթային ինտեգրման չափորոշիչները (այս առումով, կարելի է կիրառել Մասստրիխտյան համաձայնագրով ամրագրված կոնվերգենցիայի չափանիշները),

• ստեղծել անդամ պետությունների թույլ զարգացած շրջանների տնտեսական աճը խթանող հատուկ հիմնադրամներ, որոնք կնպաստեն տարածքների համաչափ զարգացմանը, ինչը մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիներից մեկն է:

**Ներկայացվել է 18.07.2017թ.  
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.**

<sup>3</sup> Шинко Ю.В., Теории регионального экономического союза в условиях Еразийской интеграции, Вестник КНУ им. Ж. Баласагына 2015, Специальный выпуск, Бишкек, МАРТЧНАБ, 2015, с. 241.